№ 150 Օգոստոսի 28 (Սեպտեմբերի 9) 1880 Օգոստոսի 28 (Սեպտեմբերի 9) № 150

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարվանը 6 րուբլի
Առանձին համարները 5 կոպէկով:

—

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

—

Օտարքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ"

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)

—

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

—

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

«Русская Рѣчь» ամսագրի յօդուածը: —Ներքին տեսութիւն: Նամակ Ախալցխայից: Նամակ Երևանից: Նամակ Շուշուց: Նամակ խմբագրին: Ներքին լուրեր:—Արտաքին տեսութիւն: Գերմանիա: «Голосъ» լրագրի թղթակցութիւնը: Յունաստան: — Յայտարարութիւններ: — Բանասիրական: Սալեանի ձկնորսութեան խնդիրը:

«РУССКАЯ РѢЧЬ» ԱՄՍԱԳՐԻ ՅՕԴՈՒԱԾԸ

—

Այդ ամսագրի օգոստոսի տետրակում կարդացինք մի յօդուած «Внутреннее состояніе Турціи» վերնագրով:

Թիւրքիայի ներքին ժամանակակից դրութիւնը նկարագրելով, հեղինակը մեծ ուշադրութիւն է դարձնում Թիւրքաց Հայաստանի վրա: Նա բերում է իր յօդուածի մէջ Վանի հայերի աղերսագիրը, ցոյց է տալիս թւանշաններով թէ հայերը Հայաստանի չորս վիլայէթներում, որոնց համար ինքնավարութիւն է պահանջվում, աւելի բազմաթիւ են քան թէ նոյն վիլայէթների միւս ազգաբնակութիւնները, նկարագրում է Թիւրքաց հայերի թշուառ դրութիւնը, նրանց հարստահարվելը քիւրդ աւազակների և թիւրք պաշտօնեաների ձեռքով, վերջապէս արտատպում է «Голосъ» լրագրից Կ. Պօլսի ամբողջ նամակագրութիւններ:

Հեղինակը խօսում է այն հաւանականութեան մասին, որ Թիւրքաց պետութիւնը կաքսորվի Եւրոպայից դէպի Ասիա, և աւելացնում է թէ հազիւ Թիւրքիան կը կարողանայ Ասիայում կազմել մի զօրեղ, կենտրոնացած, կազմակերպված պետութիւն:

Այնտեղ, Ասիայում, ասում է հեղինակը, մենք հանդիպում ենք մի ազգութեան, հայոց ազգութեան, որ իր մտաւոր և տնտեսական զարգացմամբ այնքան նշանաւոր է, որ մեծ ապագայ է խոստանում:

Այդ ազգի մտաւոր և քաղաքական կենտրոնները երեք են, շարունակում է յօդուածագիրը՝ Կ. Պօլիս, Էջմիածին և Թիֆլիս: Թէև Թիւրքիան կարող է իր պետական կեանքը սահմանափակել Փոքր-Ասիայում և Հայաստանում, բայց, աւելացնում է ռուս ամսագիրը, մեզ ռուսներիս համար դա մի որ և է վտանգ չէ կարող ներկայացնել, որովհետև մենք ունենք մեր ձեռքում մի զօրեղ գործիք Թիւրքաց ուժի դէմ. այդ զօրեղ գործիքը՝ հայոց ազգն է, որի ազգային կեանքը և մտաւոր մակերևոյթը մենք ամեն միջոցներով պէտք է աշխատենք բարձրացնել: Եւ այդ մենք կարող ենք անել, շարունակում է նա, խմբելով Անդրկովկասում, մանաւանդ Թիֆլիսում հայոց ինտելլիգենցիան և բարձրացնելով դպրոցական կեանքի և լուսաւորութեան միջոցով այդ ինտելլիգենցիայի մտաւոր մակերևոյթը:

Իսկ դորա համար, վերջացնում է իր յօդուածը «Русская Рѣчь» ամսագրի հեղինակը, հարկաւոր է շտապել Թիֆլիսի համալսարանի հիմնարկութեամբ:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՑԽԱՅԻՑ

—

23-ին օգոստոսի

Ախալցխայի խռովասէր և անմիաբան հայ-կաթօլիկ ժողովրդի վարքի, բարքի և զանազան կէտերի վրա շատ քիչ անգամ խօսվել է լրագրութեան մէջ: Այդ պատճառով ես, որպէս հայ-կաթօլիկ, պարտք եմ համարում իմ թշուառ ազգակիցներին համոզել, որ ունենան դէպի իրանց արիւնակից հայ լուսաւորչական եղբայրները սէր և միաբանութիւն, որոնք նոցա մէջ շատ քիչ են գտնվում:

Չը նայելով, որ նրանք ամեն տեղ իրանց ազգանունը ստորագրելիս, ամենից առաջ գրում են «հայ-կաթօլիկ» բառը, բայց դարձեալ անգթայ են դէպի իրանց ազգութիւնը, և ամենևին չեն ճանաչում իրանց արիւնակից եղբայրներին:

Մի քանի ժամանակ առաջ տեղիս հայ-կաթօլիկներից մէկը սաստիկ զզված կաթօլիկ հոգեւորականներից, իր ամբողջ ընտանիքով ընդունեց լուսաւորչականութիւն: Եւ ահա ինչ եմ լսում ժողովրդի բերանից: Լսում եմ այն, որ իբրև հայ, իբրև քրիստոնեայ ոչ ոք իրաւունք չունի անելու, թէ լաւ է մահմեդական կրօնքը ընդունել քան թէ լուսաւորչականը: Ասացէք, կաթօլիկ հայեր, միթէ մահմեդականութիւնը դուք գերադասում էք լուսաւորչականութիւնից, միթէ կարելի է անել այսպիսի դառն խօսքեր, միթէ կարելի է

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍԱԼԵԱՆԻ ՁԿՆՈՐՍՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

—

Կովկասի ձկնորսութեան խնդիրը մեր տնտեսական կեանքի և արքունի գանձարանի համար այնքան կարևոր նշանակութիւն ունի, որ հազիւ թէ ներելի է մեր պարբերական անկախ օրագրականութեան, եթէ այս խնդիրը մինչև ցայժմ անուշադիր է թողած: Որքան կը յիշեմ «Մշակը» իր իննամեայ ընթացքում ոչ մի երևոյթ, ոչ մի խնդիր, որ կը վերաբերէին մեր երկրի ազգային, քաղաքական, տնտեսական, մանաւանդ տնտեսական և այլն և այլն կենաց, բարձի թող արած չէ, որ բազմակողմանի և հիմնաւոր քննութեան առարկայ արած չը լինի: Տարաբաղդաբար այս խնդիրը թողնված է անուշադիր և ներկայումս, երբ բարձրագոյն մարտի 18-ին հաստատված նոր կանոնադրութիւնը մեծ փոփոխութիւններ պիտի մտցնէ Կովկասի ձկնորսութեան վիճակի մէջ և ոչնչացնէ, կարծվում է, մենավաճառութեան զօրութիւնը, որ մի ծանր քարի նման ծանրացած էր հասարակ և խեղճ ժողովրդի վզի վրա:

Ծածուկ բան չէ, որ ձկնորսութեան գործը և առուտուրը ի սկզբանէ բացառապէս հայերի ձեռք գտնվելով, մի քանի բաղդաւորների ձեռքում մեծ հարստութիւն դիզելու պատճառ է եղած. Նոյնպէս ծածուկ բան չէ, որ կապալառութեամբ այս գործը մենավաճառութիւն լինելով՝ արուեստապէս ձկնեղէն ապրանքի գինը այնքան բարձրացած է վերջին ժամանակներում, որ հազիւ թէ այժմ ձկնեղէնը կարելի է հասարակ ժողովրդի կենսական գլխաւոր պաշարների շարքում դնել, ինչպէս առաջ էր: Ճշմարիտ է՝ որ կենսական գլխաւոր պաշարների թանգանալու բնական պատճառը այս գործի մէջ ևս իր դերը կատարում է. պահանջի և առաջարկութեան խստաբարոյ և անողոք օրէնքը և այստեղ իր ներգործութիւնը ունի. այսուամենայնիւ անկասկած կարելի է ընդունել, որ առուտուրի կանոնաւոր ընթացքի մէջ բնական պատճառների հետ մեծ ճնշում տուին արհեստական պատճառները՝ եթէ նոյն առուտուրը մենավաճառութեան արդիւնք է:

Չը նայելով որ մեր ձկնորսութիւնը և նրա առուտուրը կենսական հարցի կարևորութիւն ունի մինչև այժմ մեր հասարակութեան, այո, կարող եմ ասել և կառավարութեան համար, մի անծանօթ, թանձր խաւարով ծածկած մի լաբիրինտ է, որի մէջ կարող էին ազատ և համարձակ մանգալ այն բաղդաւորները, որոնց վրա տեղացել էր երկնային կապալառութեան (ОТКУПЪ) և մենավաճառութեան պարարտացուցիչ մանանան: Դրամաւոր ազաների շարքում մտնող վաճառականի ցնորքն էր Սալեանի կապալառու լինել, իսկ Բաղաղ-խանի տկլոր և բոբիկ աշակերտի երազն էր Սալեանում պրիկաշչիկ (գործակատար) դառնալ....

Զարմանալի ոչինչ չը կայ. —թէ մինը և թէ միւսը ուղղապատ էին իրանց ցանկութեան մէջ: Սա մի կտոր դմակ էր, որի նմանը հազիւ թէ Կովկասում ուրիշ տեղ կը գտնվի....

Մի խօսքով թէև այս գործի հետ կապված էին հազարաւորների կենսական շահերը՝ երկրի տնտեսական վիճակի գլխաւոր կարիքներից մէկը և արքունի գանձարանի օգուտը՝ այսուամենայնիւ այս գործը տասնաւոր տարիների ընթացքում ծառայել է անհատների, մի քանի դրամաւորների և վարչական վերին շրջանում թափառող՝ մի քանի պարոնների գրպանին....

Ի հարկէ՝ աւելորդ է ասել, թէ ինչպէս այս նշանաւոր կապալառութեան ղեկավարները կառավարում և տնտեսավարում էին այս գործը, ինչ ճանապարհ և ինչ հնարք էին գործ դնում, որ նրանց դրած նշանաւոր գումարը ոչ թէ ապարդիւն, այլ մի քանի փոխարէն երկուսը երեքը վաստակէին.... Բաւական է մտաբերել՝ թէ ինչ ձև և ինչ կարգ կայ մեր գլխաւոր դրամաւորների առևտրական գործերի մէջ և ինչ տեսակ տնտեսավարութիւն—այն ժամանակ կարող ենք ասել, որ այս գործի մէջ ևս մի առանձին զարտուղութիւն նկատելի չը պէտք է լինէր դէպի եւրոպական տնտեսավարութիւնը:

Ներկայումս այս փառաւոր կապալառութեան օրհասը հասել է. մնացել է մի ամիս, որ նոր կանոնադրութիւնը գործադրվի մեր ձկնորսարաններում: Նոր կարգադրութեան հիմամբ աճուրդները արդէն վերջացած են և մասնաւորապէս յայտնի է, թէ որ մասը ում է վիճակված և ինչ գնով:

Եթէ Կովկասի ձկնորսութեան խնդիրը մեր երկրի տնտեսական կեանքի գլխաւորներից մինը չը լինէր՝ եթէ նոր հաստատված կանոնադրութիւնը այդ խնդրի հետ սերտ կապակցութիւններ չունենար, բազմատեսակ, մինը միւսին հակառակ շահերով հարցեր չառաջարկէր և մեծամեծ բարեաց և ակնկալութեան առիթ չը լինէր,—հարկաւ սրա վրա առանձին ուշադրութիւն չը դարձնելը օտարոտի երևոյթ համարելու տեղիք չէր լինի: Բայց որովհետև կարծվում է, որ նոր կանոնադրութիւնը գոհունակ կերպով վճռելով մեր տնտեսական գլխաւոր և կենսական հարցերից մինը, ենթադրում է կապալառութիւնից և մենավաճառութիւնից բղխած վատթար հետևանքների և չարեաց առաջն առնել և հաւասարապէս բաժանել շատերի մէջ մեր երկրի հարստութիւններից մինը և արժանացնել ձկնեղէն նիւթերի գինը,—այս իսկ պատճառով հետաքրքրական էր այդ կանոնադրութեան էական տարրերը քննութեան ենթարկել և տեսնել թէ օրէնսդրութեան ցանկութիւնը ինչ չափով համապատասխան է իրական կեանքի պահանջներին, որքան հաստատ և հիմնական փաստերի վրա հիմնված են այդ կանոնադրութեան սկզբունքները և վերջապէս ինչ էական փոփոխութիւններ կատարված են, որ հին յիշատակը նզովվի և նորի շնորքը տարածվի հասարակաց ակնկալութեան համեմատ:

Ներկայումս այս տողերը աւելորդ կը լինէին, եթէ մեզանում ընդունված լինէր արտասահմանեան հասարակութիւնների կարգը և սովորութիւնը, որով տնտեսական, հասարակական, ելմտական, վաճառականական, դատաստանական և այլն կարգերի մէջ պահանջելի վերանորոգութիւնները օրէնսդրին ներկայանալուց առաջ, հասարակութեան, մասնագէտների և տպագրութեան կողմից ամենակողմանի քննութեան առարկայ են լինում *):

Բայց որովհետև մեր ձնորսարանների վիճակի վերանորոգութիւնը նախագծվելու ժամանակ նախապէս հարցված չէր, թէ նոր փոփոխութիւնները ինչ տեսակ հարցեր պիտի լուծեն կամ ինչ տեսակ պահանջմունքների բաւականութիւն տան—այս պատճառով մամուլի պարտքն է լուսաւորել այս խնդիրը և տեսնել թէ ինչ տեսակ ապագայի ակնկալութիւնը կարող ենք ունենալ:

Բօժի-Պրօմիսլ, Արամեանց

---

*) Այս վիճակի մէջ մի մխիթարական երևոյթ նկատեցինք այս օրերս. Թերեքի նահանգի կառավարիչ գեներալ Սվիստունովը, ինչպէս հաղորդում է «Голосъ» լրագիրը, որին յանձնած էր Կովկասեան հանքային ջերմուկների վերանորոգութիւնը ներկայ պահանջների համեմատ, այս օրերս իր եռամեայ քննութեան արդասիքը հասարակական դատի և քննադատութեան ենթարկեց մի տետրակով որի յառաջաբանում հրաւիրում է մասնագէտներին ցոյց տալ այդ աշխատութեան թերութիւնը խոստովանելով որ այսպիսի ծանրակշիռ խնդրի լուծումը մի մարդու կարողութիւնից վեր է, թէև այդ մարդու առաջ ճանապարհները բաց են լինէին: Արժանաւոր օրինակ հետևողութեան: